

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան»  
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝  
2017 թ. դեկտեմբերի 25-ին տեղի ունեցած թիվ 8 նիստի

ք. Երևան

25.12.2017 թ.

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 31-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Նիստը նախագահում էր Խորհրդի նախագահ, ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը, քարտուղարում՝ Խորհրդի քարտուղար, Հայոց պատմության ամբիոնի ասիստենտ Մ. Մալխասյանը:

Ս. Սարգսյանը, բացելով Խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. 2016-2017 ուստարում ԵՊՀ գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ԵՊՀ ղեկավարի հաշվետվության ներկայացում և 2016-2020 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով 2016-2017 ուստարում նախատեսված աշխատանքների կատարողականի հաստատում:  
*Ջեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան*
2. 2017 թ. (հունվար-նոյեմբեր ամիսներ) ԵՊՀ եկամուտների և ծախսերի կատարողականի մասին հաղորդում:  
*Ջեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան*
3. 2018 ֆինանսական տարվա ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:  
*Ջեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան*
4. 2018 թ. ԵՊՀ կառուցվածքի հաստատում:  
*Ջեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան*
5. 2018 թ. ԵՊՀ հաստիքացուցակի հաստատում:  
*Ջեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան*
6. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի անդամների կողմից օրակարգային այլ հարց չառաջարկվեց, և օրակարգը դրվեց քվեարկության. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. 2016-2017 ուստարում ԵՊՀ գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ԵՊՀ ռեկտորի հաշվետվության ներկայացում և 2016-2020 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով 2016-2017 ուստարում նախատեսված աշխատանքների կատարողականի հաստատում: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը 2016-2017 ուսումնական տարում ԵՊՀ գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման համար խոսքը տրամադրեց ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանին՝ առաջարկելով 20 րոպեով սահմանափակել ելույթը:

Ա. Սիմոնյանը ներկայացրեց ԵՊՀ ձեռքբերումներն ու բացթողումներն ուսումնական գործընթացի, գիտահետազոտական աշխատանքների, միջազգային համագործակցության, հրատարակչական գործունեության, հանրային կապերի, տեղեկատվական համակարգերի, սոցիալական քաղաքականության, ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքների ոլորտներում: Ռեկտորն ընդգծեց, որ 2016-2017 ուստարում ԵՊՀ գործունեությունը բոլոր բնագավառներում կազմակերպվել և իրականացվել է ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով (2016-2020 թթ.) նախատեսված խնդիրներին ու նպատակներին համապատասխան: Ա. Սիմոնյանի վստահեցմամբ՝ բոլոր բնագավառներում իրականացված միջոցառումներն ու ծրագրերը կոչված են եղել խթանելու համալսարանի առաջընթացը, ապահովելու նրա մրցունակությունը ՀՀ-ում և միջազգային ասպարեզում: Նա նաև նշեց, որ իրականացված կրթական գործունեությունն ընդհանուր առմամբ արդյունավետ է եղել, և հաջողությամբ իրականացվել է նախատեսված գործընթացների մեծ մասը: Այդուհանդերձ, եղել են նաև բացթողումներ, որոնք հիմնականում վերաբերում են գիտական արտադրանքի որակին, դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառմանը, բուհ-գործատու կապի ամրապնդմանը, ընդունելության արդյունավետությանը և այլն: Ընդհանուր առմամբ՝ իրականացվել են ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված 127 խնդիրների 137 գործողություններ:

Նախևառաջ Ա. Սիմոնյանը ներկայացրեց ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպմանն առնչվող բարեփոխումները: Այսպես, 2017 թ. մայիսի 4-ին ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատել է «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթղթի լրամշակված տարբերակը, որտեղ առկա ուսուցմամբ կիսամյակի 20 շաբաթից 15-ը հատկացվում են լսարանային պարապմունքներին, 2-ը՝ ընթացիկ քննություններին և ստուգարքներին, իսկ 3-ը՝ եզրափակիչ քննություններին: Նախկինում 16 շաբաթ հատկացվում էր տեսական ուսուցմանը, իսկ 4՝ քննաշրջանին: Սահմանվել է ծրագրի 2 կառուցամաս՝ մասնագիտական և ընդհանուր կրթական, ընդ որում՝ վերջինս իրականացվում է հիմնականում առաջին կուրսում: «Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթուղթը լրամշակմամբ հաստատվել է դեռևս 2016 թ.

հուլիսի 7-ին, որի արդյունքում հաստատվել են առկա ուսուցման 115 և հեռակա ուսուցման 23 մագիստրոսական ծրագրեր: Բացի այդ, «Բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը» լրամշակված փաստաթղթով, որ հաստատվել է 2017 թ. մայիսի 4-ին, վերանայվել է ուսումնական բեռնվածությունը, ինչը հստակեցրել է ուսումնական գործընթացի կազմակերպումը: Հաստատվել է նաև «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական հաշվարկի նորմեր» փաստաթուղթը, որով հանվել են իրենց արդյունավետությունը սպառած դասաժամերը: Ուսանողական հետազոտությունների ակադեմիական ազնվության մակարդակը բարձրացնելու նպատակով ընդունվել են լիովին նոր երկու փաստաթղթեր՝ «ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ» և «ԵՊՀ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգ»: Ուսումնառությունից բավարարվածության վերաբերյալ ուսանողական հարցումներն էլ արդեն ամբողջությամբ իրականացվել են առցանց եղանակով:

2017-2018 ուստարվա սեպտեմբերի 1-ից ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատավարձը մեկ դրույքի հաշվարկով բարձրացվել է 10.000 դրամով: Ա. Սիմոնյանը շեշտեց, որ շարունակվում է դասախոսների վերապատրաստման ծրագիրը՝ հատուկ ուշադրություն դարձնելով տեղեկատվական տեխնոլոգիաների և անգլերենի իմացության բարելավմանը: Առհասարակ, մշակվել է մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգ, որով նախատեսվում է համապատասխան վարչության ստեղծում և մասնագիտական նկարագրիչներով աշխատակիցների պաշտոնի անձնագրերի կիրառում:

Դիմորդների հետ տարվող աշխատանքների շրջանակներում կազմակերպվել է ամենամյա դպրոցական առարկայական օլիմպիադան: Դպրոցների հետ համագործակցության 3 նոր պայմանագիր է ստորագրվել. ԵՊՀ-ն պայմանագիր ունի Երևանի 24 և ՀՀ մարզերի 17 ավագ դպրոցների հետ: 2017-2018 ուստարում ԵՊՀ է դիմել ավագ դպրոցի 2791 շրջանավարտ՝ նախորդ ուստարվանից փոքր-ինչ պակաս, ինչը պայմանավորված է ՀՀ-ում դիմորդային տարիքի երեխաների ընդհանուր թվի նվազմամբ, ընդ որում՝ ԵՊՀ-ն շարունակում է պահպանել դիմորդների ավելի քան 30 % մասնաբաժինը ՀՀ միասնական ընդունելության համակարգում: Ռեկտորը ևս մեկ անգամ վստահեցրեց, որ բնագիտական ուղղվածությամբ մասնագիտական կրթությանը նախապատրաստված դիմորդների հոսքը հնարավոր կլինի ավելի կանոնավոր դարձնել հանրապետության առաջատար ավագ դպրոցներից ու վարժարաններից հարցազրույցով ընդունելությունն օրենսդրորեն թույլատրելու պարագայում, ինչից կշահի ոչ միայն բուհական ընդունելությունը, այլև պետությունը: Նա նաև նշեց, որ հենակետային վարժարան հիմնելու նպատակով ԵՊՀ-ն դիմել է Երևանի քաղաքապետին և խնդրել համալսարանին հանձնել Լ. Շանթի անվան թիվ 4 հիմնական դպրոցը, սակայն մերժում է ստացել: Նրա հավաստմամբ՝ հենակետային

վարժարանի գոյությունը որակյալ դիմորդների կանոնավոր հոսք կապահեր Մայր բուհին, ընդ որում՝ ՀՀ պետական և միջպետական պայմանագրով գործող բուհերից շատերն ունեն նմանատիպ վարժարան կամ զրոյական (նախապատրաստական) կուրս, որտեղից կատարում են մեխանիկական կամ հեշտացված ընդունելություն՝ անհավասար մրցակցային պայմաններ ստեղծելով ընդունելության գործընթացում:

Գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման և հաշվառման գործում կատարվել են մի շարք նորամուծություններ: Գործողության մեջ է դրվել «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը», որով խրախուսվում են աշխատակիցների կողմից գիտական հրատարակումները, կադրերի պատրաստումը և արդի տեխնոլոգիաների կիրառումն ուսումնական գործընթացում: Գիտական աշխատանքների հաշվառման համար ստեղծվել է հատուկ շտեմարան՝ «ԵՊՀ աշխատակիցների համացանցային ներքին տիրույթ» (ինտրանետ համակարգ), որտեղ աշխատակիցն ինքն է մուտքագրում իր աշխատանքը, այնուհետև գիտական քաղաքականության վարչությունում հաստատում են դրա իսկությունը: ԵՊՀ կողմից կազմակերպվող միջազգային գիտաժողովների կայացմանը նպաստելու համար ներդրվել է ֆինանսական աջակցության տրամադրման կարգ: Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի գիտական հրատարակություններից հաշվառվել է 74 մենագրություն, 31 դասագիրք, 90 ուսումնական ձեռնարկ, 1636 գիտական հոդված, 218 թեզիս: Իրականացվել են 196 դրամաշնորհային ծրագրեր և արտասահմանյան դրամաշնորհներ՝ նախորդ ուստարվանից շուրջ մեկ երրորդով ավելի: Ընդհանուր առմամբ՝ ԵՊՀ-ն տալիս է ՀՀ գիտական արդյունքի մեկ երրորդը:

Շարունակվել են լաբորատոր վերազինման աշխատանքները: Ամբողջովին արդիականացվել են Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի, Ֆարմացիայի ինստիտուտի 15 լսարան և ուսումնական լաբորատորիա: Ֆարմացիայի ինստիտուտում «Ալֆա ֆարմ» ընկերության հետ համատեղ բացվել է «ուսումնական դեղատուն»: Արդիականացվել է գրադարանի մասնաշենքի 6-րդ հարկի էլեկտրոնային ռեսուրսների համակարգչային սրահը: Շարունակվել են Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում ստեղծվող Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի հիմնադրման աշխատանքները. ձեռք են բերվել շուրջ 220 մլն դրամ արժողությամբ սարքեր, լաբորատոր և գրասենյակային կահույք: Կենսաբանության ֆակուլտետում բացվել է գենետիկայի և բջջաբանության ամբիոնի մոլեկուլային գենետիկայի ժամանակակից լաբորատորիան:

Շարունակվել է համագործակցությունն արտերկրի գիտակրթական կենտրոնների հետ: Կնքվել են միջբուհական գործընկերության 33 նոր պայմանագրեր: Իրականացվել են կրթական, գիտական, մշակութային համատեղ ծրագրեր, դասախոսների և սովորող-

ների փոխայցելություններ: Նախորդ ուստարվա համեմատությամբ 12 %-ով ավելացել է դեպի արտասահմանյան գործընկեր կազմակերպություններ ԵՊՀ աշխատողների գործուղումների թիվը: Ընդհանուր առմամբ՝ իրականացվել են 686 գործուղումներ: ԵՊՀ ուսանողները փայլուն են հանդես եկել միջազգային օլիմպիադաներում: Այսպես, միայն Բուլղարիայում տեղի ունեցած մաթեմատիկայի 24-րդ միջազգային ուսանողական օլիմպիադայում ԵՊՀ ուսանողները նվաճել են 2 ոսկե և 2 արծաթե մեդալներ՝ նախորդ ուստարվա 15-րդ տեղի հետ համեմատ զգալիորեն բարելավվելով արդյունքը և թիմային հաշվարկով ապահովվելով 7-րդ հորիզոնականը Մայր բուհի համար:

Աշխատանքներ են տարվել ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ: Շարունակվել են աշխատանքները տեղեկատվական համակարգերի, համակարգչային տեխնիկայի, ներհամալսարանական համակարգչային ցանցի զարգացման և արդիականացման ուղղությամբ: Մարզահամալիրի և նորակառույց հյուրատան համար անցկացվել է օպտիկամանրաթելային կապուղի՝ 1 Գբիթ/վ թողունակությամբ, տեղադրվել են անլար ինտերնետ կապի սարքեր: ԵՊՀ մասնաշենքերում լուսատուները փոխարինվել են «LED» լամպերով, և մարզահամալիրի տանիքին տեղադրվել է արևային մարտկոցների համակարգ: Սկսվել և ակտիվորեն ընթանում են 290-300 ուսանողների համար նախատեսված հանրակացարանի կառուցման աշխատանքները: Այն ունենալու է երկտեղանոց սենյակներ՝ առանձին լվացարաններով: Իրականացվել են նաև 2-րդ և 4-րդ ուսումնական մասնաշենքերի արտաքին երեսպատման աշխատանքները:

Ռեկտորն իր հաշվետվության մեջ անդրադարձավ նաև ուսանողական կառույցների աշխատանքին՝ նշելով, որ Ուսանողական խորհուրդը կազմակերպել է շուրջ 600, իսկ Ուսանողական գիտական ընկերությունը՝ 516 միջոցառում: Ա. Սիմոնյանը կարևորեց հատկապես Արցախի Հանրապետությունում ԵՊՀ ուսանողական կառույցների աջակցությամբ Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի կողմից կազմակերպված «Համահայկական ուսանողական ռազմական բանակում» ծրագիրը, որի նպատակն է զարգացնել ուսանողների մարտական և ֆիզիկական պատրաստության վիճակը, նպաստել նրանց ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Ա. Սիմոնյանը ներկայացրեց նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գործունեության առանցքային ցուցանիշները՝ շեշտելով նրա կարևոր դերը սահմանամերձ մարզի երիտասարդությանը տեղում մասնագիտական կրթությամբ ապահովելու գործում:

Անդրադառնալով ԵՊՀ սոցիալական քաղաքականությանը՝ ռեկտորը նշեց, որ ԵՊՀ վարչակազմի ու Արիեստակցական կազմակերպության ուշադրության կենտրոնում են եղել համալսարանի աշխատողների հանգստի, առողջական վիճակի և սոցիալական տարբեր խնդիրներ: Մայր բուհը նախաձեռնել է հիմնական աշխատակիցների համար նախատեսված բժշկական ապահովագրության ծրագիր, որն իրականացվել է «Ռոսգոս-

ստրախ-Արմենիա» ապահովագրական ընկերության միջոցով: Բացի այդ, ԵՊՀ հաշմանդամ աշխատակիցներին վճարվում է ամենամսյա հավելավճար: ԵՊՀ-ն շարունակում է նաև Ապրիլյան պատերազմում զոհված 24 զինծառայողների 56 անչափահաս երեխաներին օգնություն տրամադրելու ծրագիրը. զոհված յուրաքանչյուր զինծառայողի ընտանիքի մեկ անչափահաս երեխային ամսական վճարվում է 40 հազար, իսկ նույն ընտանիքի յուրաքանչյուր հաջորդ երեխային՝ 20 հազար դրամ օգնություն: Այս ծրագրով դրամական օգնության ընդհանուր ծավալը տարեկան շուրջ 25 մլն դրամ է:

Անդրադառնալով միջազգային վարկանիշավորման համակարգերում ԵՊՀ ներկայացվածությանը՝ Ա. Սիմոնյանը նշեց, որ «Webometrics» ընկերության չափումներով՝ ավելի քան 26 հազար համալսարանների մեջ ԵՊՀ-ն զբաղեցնում է 2651-րդ տեղն աշխարհում: Տարածաշրջանում ԵՊՀ-ն իր վարկանիշով գերազանցում է Ադրբեջանի բոլոր բուհերին և զիջում է միայն Վրաստանի երկու բուհերի:

Ռեկտորը խոսեց նաև առկա բացթողումների և թերությունների մասին, որոնք շտկելու համար պետք է հետևողական աշխատանքներ իրականացնել: Նա նշեց, որ թեև խորացել է «Սինոփսիս-Արմենիա»-ի և դեղագործական ընկերությունների հետ համագործակցությունը, սակայն պետք է լրջորեն բարելավել գործատու կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ նրանց հնարավորություն տալով ընդգրկվելու կրթական ծրագրերի և ուսումնական պլանների մշակման գործընթացին: Ռեկտորի կողմից առանձնացված մյուս խնդիրն առնչվում էր դասախոսությունների որակին. դասախոսների մի մասը շարունակում է դասախոսություն թելադրել, ընդ որում՝ հաճախ այն մի քանի տասնամյակ առաջ մշակված նյութերի հանրագումար է: Նմանատիպ խնդիր առկա է նաև հրատարակվող գիտական աշխատանքների մի մասի որակի հարցում, ուստի այսուհետ ԵՊՀ գիտահրատարակչական խորհուրդը հրաժարվելու է տպագրել նմանաբնույթ աշխատանքները: Ա. Սիմոնյանը նաև ցավով նշեց, որ, չնայած ծավալած ակտիվ գործունեությանը, Ուսանողական խորհուրդը դեռևս չի ապահովում ուսանողների մեծ մասի ներգրավվածությունը կառույցի աշխատանքներում և ներհամալսարանական կյանքում:

Ամփոփելով իր հաշվետու զեկույցը՝ Ա. Սիմոնյանը ներկայացրեց կոռուպցիայի դեմ պայքարի համալիր միջոցառումների իրականացման արդյունքները: Այդ համատեքստում նա շեշտադրում կատարեց Եվրախորհրդի և Եվրամիության կողմից իրականացվող ծրագրերին ԵՊՀ ներկայացուցիչների ակտիվ մասնակցության վրա՝ առանձնացնելով նրանց աջակցությամբ ՀՀ ԿԳՆ կողմից իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում տեղի ունեցած միջոցառումները:

Ռեկտորի հաշվետվության ավարտից հետո Նախագահ Ս. Սարգսյանը զեկուցողին հարցեր ուղղելու հնարավորություն տվեց խորհրդի անդամներին: Քանի որ սկզբնապես

հարցեր չհնչեցին, Նախագահն ինքը երկու հարց ուղղեց զեկուցողին. ի՞նչ ի նկատի ունի Ա. Սիմոնյանը՝ խոսելով բուհերի միջև բակալավրիատի ընդունելության անհավասար պայմանների մասին, և ի՞նչ սկզբունքով են ընտրվել Ապրիլյան պատերազմում զոհված 24 զինծառայողների ընտանիքները: ԵՊՀ ռեկտորը պատասխանեց, որ ՀՀ-ում միջպետական համաձայնագրով գործող բուհերը և արտասահմանյան բուհերի մասնաճյուղերն ընդգրկված չեն միասնական ընդունելության համակարգում և իրենց ընդունելությունը կազմակերպում են սեփական ժամանակացույցով՝ ավելի վաղ և մի քանի անգամ ձախողման փորձ ունենալու հնարավորությամբ: Սա, ինչպես նաև այլ բուհերում գրոյական կուրսի և հենակետային վարժարանի առկայությունն անհավասար մրցակցային պայմաններ են ստեղծում բակալավրիատում դիմորդների ընդունելությունը կազմակերպելիս: Նա հույս հայտնեց, որ այս հարցին օրենսդրական կարգավորում կտրվի բարձրագույն կրթության մասին ընդունվելիք նոր օրենքով և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերով: Անդրադառնալով մյուս հարցին՝ Ա. Սիմոնյանը նշեց, որ հարցում է կատարվել ՀՀ պաշտպանության նախարարություն, որտեղից ստացվել է Ապրիլյան պատերազմում զոհված զինծառայողների երեխաների ցուցակը, որի համաձայն էլ տրվում է սահմանված օգնությունը:

Ռեկտորի պատասխանը լսելով՝ Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը ևս մեկ անգամ հարցեր ուղղելու հնարավորություն տվեց Խորհրդի անդամներին: Խոսքի իրավունք խնդրեց ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչ Ն. Հարությունյանը: Նա դրվատանքի խոսքեր հնչեցրեց Ա. Սիմոնյանի հաշվետու զեկույցի հասցեին և առաջարկեց ԵՊՀ 2016-2017 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Այնուհետև ելույթ ունենալու ցանկություն հայտնեց ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ Ա. Աթանեսյանը: Նա ևս առաջարկեց ԵՊՀ 2016-2017 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար, սակայն մտահոգություն հայտնեց, որ ուսանողների մի մասը չի համապատասխանում ուսանողի կերպարին, և երբեմն նկատելի է կարգազանց և ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների անպատժելիության մթնոլորտ, ուստի նա առաջարկեց ուժեղացնել խստությունը, ինչպես նաև նոր ընդունված ուսանողների համար աշխարհի առաջատար բուհերից շատերի օրինակով դասերի փոխարեն ուսումնառության սկզբում կազմակերպել ծանոթացման և կողմնորոշման շաբաթ: Նա նաև խնդրեց լուծումներ փնտրել գիտական դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների գնման գործընթացը հեշտացնելու ուղղությամբ, քանի որ հաճախ ԵՊՀ գիտական խմբերը, օրինակ՝ «ERASMUS+»-ի ծրագրային ժամանակացույցից հետո են մնում հենց գնումների ձգձգման պատճառով: Ռեկտորը պատասխանեց, որ թեև պլանավորված է հաջորդ տարվա գնումների ժամանակացույցը՝ ըստ առկա դրամաշնորհային ծրագրերի, սակայն ֆինանսական

տարվա ընթացքում շատ հաճախ ստացվում են նոր դրամաշնորհներ, որոնք բնականաբար պլանավորված չեն եղել, և դրանց իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերումն իսկապես մի քանի ամիս ձգձգվում է: Ավելին, ֆինանսավորող արտասահմանյան կազմակերպությունները հաճախ պահանջում են սարքավորումները գնել իրենց կողմից առաջարկվող ընկերությունից, ինչը ենթադրում է առանց մրցույթի ուղղակի գնում, որն արգելվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Նրա հավաստմամբ՝ փոխվարչապետի հետ քննարկվել է այս հարցը, և դիտարկվում է ենթաօրենսդրական ակտով հարցի հնարավոր լուծումը: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը խոստացավ հետամուտ լինել հարցի շուտափույթ կարգավորմանը: Պատասխանելով առաջին հարցին՝ Ա. Սիմոնյանը նշեց, որ կարգապահական պատիժներ գործում են, նույնիսկ ցածր առաջադիմություն ունեցող և կարգազանց մի քանի հարյուր ուսանողներ հեռացվել են համալսարանից, սակայն կոչ արեց հարցի լուծումը փնտրել պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական որակների և դաստիարակչական գործառնությունների գործադրման մեջ: Նախագահ Ս. Սարգսյանն իր հերթին կարծիք հայտնեց, որ պետք չէ շատ ներողամիտ լինել երկար ժամանակ չափազանց ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների նկատմամբ:

Այլ հարցեր և ելույթներ չհնչեցին, ուստի Նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց հաստատել ռեկտորի հաշվետվությունը և ԵՊՀ գործունեությունը 2016-2017 ուստարում գնահատել բավարար: Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### **Որոշվեց.**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 3-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 3-րդ ենթակետով, լսելով 2016-2017 ուսումնական տարում ԵՊՀ գործունեության վերաբերյալ ռեկտոր Ա. Սիմոնյանի հաշվետվությունը՝

- 1) Հավանություն տալ 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
- 2) Հավանություն տալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով 2016-2017 ուստարում նախատեսված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
- 3) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016-2017 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:



**2. 2017 թ. (հունվար-նոյեմբեր ամիսներ) ԵՊՀ եկամուտների և ծախսերի կատարողականի մասին հաղորդում:** Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հիշեցրեց, որ, համաձայն «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի, ԵՊՀ կանոնադրության 22-րդ կետի 2-րդ, 42-րդ կետի 7-րդ ենթակետերի և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 16-րդ ենթակետի, Խորհուրդը պետք է հաստատի ոչ թե 11 ամսվա, այլ ֆինանսական ողջ տարվա հաշվետվությունը, ուստի այն Խորհրդի հաստատմանը կներկայացվի 2018 թ. հունիսին:

Ա. Սիմոնյանը ներկայացրեց 2017 թ. ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի տասնմեկամսյա կատարողականը, ըստ որի՝ այն պրոֆիցիտային է՝ կազմելով 1 մլրդ 483 մլն 785 հազար ՀՀ դրամ:

Եկամուտները նախատեսվածի նկատմամբ արդեն հավաքվել են 100 %-ով: Դրան նպաստել են նախահաշվով չնախատեսված մուտքերը. նախ ստացվել է Գուրգեն և Մարգարիտ Ասատուրյանների կողմից ԵՊՀ-ին կտակված 1 մլն 299 հազար 47 ԱՄՆ դոլար գումար, իսկ նոյեմբերին՝ ևս 498 հազար 700 եվրո Եվրամիության կողմից ֆինանսավորվող «ERASMUS+» դրամաշնորհային ծրագրի շրջանակում:

Ուսման վարձավճարներից եկամուտների կատարողականը կազմել է 91.3 %: Միջին ուսման վարձի չափը ԵՊՀ-ում 2017 թ., հաշվի առնելով գեղչերը, կազմել է 438.6 հազար դրամ՝ վճարովի համակարգում սովորող միջին տարեկան 13380 ուսանողների հաշվարկով:

3220 ուսանողների, այսինքն՝ վճարովի համակարգում սովորող ուսանողների 24 %-ին, ԵՊՀ-ի կողմից լրիվ կամ մասնակի գեղչվել է ուսման վարձը: Ուսման վարձի գեղչերի ընդհանուր ծավալը կազմել է 391.065 մլն դրամ, այսինքն՝ մեկ ուսանողի հաշվով՝ 121.4 հազար դրամ:

Պետական ֆինանսավորումն ընդհանուր եկամուտներում կազմել է 25.8 %, որից 17.2 %-ը՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, իսկ 8.6 %-ը՝ գիտական և գիտատեխնիկական ծրագրերի համար:

Մեկ ուսանողի համար պետական նպաստը կազմել է 656.6 հազար դրամ: Պետական ֆինանսավորմամբ ԵՊՀ-ում սովորում են միջին տարեկան թվով 2485 ուսանողներ, որոնցից 125-ը՝ հետբուհական մասնագիտական կրթությամբ, իսկ 147-ը՝ Իջևանի մասնաճյուղում: Պետական ֆինանսավորմամբ սովորում են նաև արտոնություն ունեցող 167 ուսանողներ: Բացի վերը նշվածից, 11 ուսանողների ուսման վարձը փոխհատուցվում է ՀՀ պաշտպանության նախարարության, իսկ ևս 13 ուսանողներինը՝ ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից:

Գիտական և գիտատեխնիկական ծրագրերով պետական ֆինանսավորումը կազմել է 855 մլն դրամ, ինչը կազմում է տարեկան նախատեսվածի 85.7 %-ը:

Գործառնական այլ եկամուտների գծով կատարողականը կազմել է 98.7 %: Այս հոդվածի 43.3 %-ը վերաբերում է լրացուցիչ կրթական ծառայություններին:

Հաշվետու տարում շահագործման է հանձնվել ամբողջովին վերանորոգված և կահավորված մարզահամալիրը, որտեղ, բացի ուսումնական ծրագրերից, իրականացվում են նաև վճարովի ծառայություններ, որոնցից ստացվել է ավելին քան 20 մլն դրամ եկամուտ:

Ծախսերը նախատեսվածի նկատմամբ կատարվել են 85.8 %-ով:

Աշխատավարձի ծախսերը կազմել են ընդհանուրի 67 %-ը, իսկ նախատեսվածի նկատմամբ կատարվել 86 %-ով: Աշխատակիցների միջին ամսական թիվը կազմել է 2623 մարդ: Միջին ամսական աշխատավարձը 1 մարդու հաշվարկով կազմել է 198.9 հազար դրամ, իսկ նվազագույնը՝ 80 հազար դրամ՝ ներառյալ հարկերը:

Ծախսերը նախատեսված ցուցանիշները գերազանցել են գործուղումների և հիմնանորոգման աշխատանքների հոդվածներով: Գործուղման հոդվածով գերաժախսը կազմել է ընդամենը 1 % և պայմանավորված է դրամաշնորհային ու գիտական ծրագրերով, իսկ հիմնանորոգման ծախսերի զգալի գերակատարումը պայմանավորված է ուսանողական հանրակացարանի նորոգման հետ, որը կատարվել է Գուրգեն և Մարգարիտ Ասատուրյանների կողմից ԵՊՀ-ին կտակված միջոցների հաշվին, որոնք ստացվել են հաշվետու տարվա սեպտեմբերին:

Դրամական միջոցների մնացորդը 2017 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմում է 4 մլրդ 591 մլն 575 հազար դրամ:

ԵՊՀ-ում մեկ մարդու հաշվարկով (աշխատակիցներ՝ 2623, ուսանողներ՝ 15865 մարդ) 2017 թ. 11 ամսվա կտրվածքով ծախսերը կազմել են 472 հազար դրամ:

Եզրափակելով զեկույցը՝ ռեկտորը նշեց, որ կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացված միջոցների ծախսերի կատարողականը դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 87 %:

2017 թ. հունվար-նոյեմբեր ամիսների ԵՊՀ եկամուտների և ծախսերի կատարողականի մասին հարցեր չհնչեցին, և Նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց, ի գիտություն ընդունելով ռեկտորի հաղորդումը, անցնել օրակարգային հաջորդ հարցին:

**3. 2018 ֆինանսական տարվա ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:** Ա. Սիմոնյանը, ներկայացնելով 2018 թ. ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշիվը, շեշտեց, որ այն դեֆիցիտային է, որը կազմում է 100 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ եկամուտները նվազելու են 8 %-ով կամ 800 մլն դրամով, իսկ ծախսերը՝ 7 %-ով: Նվազումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ հանրակրթական 12-ամյա

դպրոցական համակարգին անցնելու պատճառով 2018-2019 ուստարում նախատեսվում է բակալավրի կրթական աստիճանով ընդունելություն 2017-2018 ուստարվա 30 %-ի չափով: Դեֆիցիտի լրացման աղբյուրը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարիների ընթացքում կուտակված դրամական միջոցների մնացորդն է: Հաշվի առնելով եկամուտների նվազումը՝ 2018 թ. նախատեսվում է հնարավորինս կրճատել ծախսերը:

Ուսման վարձերից նախատեսվող եկամուտները նախորդ տարվա համեմատ նվազում են 617 մլն դրամով կամ շուրջ 10 %-ով: Այս հոդվածով եկամուտները կազմում են ընդհանուր եկամուտների 62 %-ը:

Պետական ֆինանսավորումը, որը կազմում է ընդհանուր եկամուտների 30 %-ը, նվազում է 177 մլն դրամով, որից բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի մասով՝ 87 մլն, իսկ գիտական ծրագրերով՝ 90 մլն դրամով: Պետական ֆինանսավորմամբ նախատեսվում է շուրջ 2400 սովորող, այդ թվում 140՝ Իջևանի մասնաճյուղում, իսկ 120՝ հետբուհական կրթությամբ: Հաշվի է առնվել այն փաստը, որ 2018-2019 ուստարվանից բակալավրի առաջին կուրսում տղաները բանակից տարկետման իրավունք չեն ունենալու:

Գիտական և գիտատեխնիկական ծրագրերով պետական ֆինանսավորումը նախատեսվում է շուրջ 910 մլն դրամ, որից 760 մլն դրամը՝ որպես դրամաշնորհային ծրագրեր, իսկ 150 մլն դրամը՝ գիտաշխատողների աշխատավարձերի հավելավճարներ: Գիտական ծրագրերի ծավալն ընդհանուր եկամուտներում կազմում է շուրջ 10 %: Հարկերի, տուրքերի և այլ վճարների տեսքով պետբյուջե վճարվում է ԵՊՀ եկամուտների 21 %-ը:

Ձեռնարկատիրական այլ գործունեության մասով եկամուտները 2017 թ. համեմատ պահպանվում են նույն չափով:

Խոսելով ծախսերի մասին՝ ռեկտորը նշեց, որ նախահաշվում աշխատավարձի վճարումները կազմում են ընդհանուր ծախսերի 66.8 %-ը: Նախորդ տարվա համեմատ այս հոդվածով ծախսերը նվազել են շուրջ 400 մլն դրամով, որից 300 մլն դրամը վերաբերում է դասախոսական, 50 մլն դրամը՝ գիտական ծրագրերի, իսկ մնացած 50 մլն դրամը՝ վարչական, ուսումնասօժանդակ, սպասարկող և ինժեներատեխնիկական անձնակազմի աշխատավարձերին: Բացի հիմնական հաստիքային աշխատավարձից, վճարվելու են նաև գիտակրթական գործունեության համար լրավճար՝ 200 մլն դրամ, հեռակա ուսուցման եկամուտների հաշվին հավելավճար՝ 335 մլն դրամ, երիտասարդ աշխատողների սոցիալական վճարների փոխհատուցում՝ 88.5 մլն դրամ, ժամավճարի տեսքով վարձատրվող դասախոսական աշխատավարձ՝ 135 մլն դրամ, գիտական գործունեության համար պետբյուջեից տրվող աշխատավարձ՝ 820 մլն դրամ, դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու համար աշխատավարձ՝ 260 մլն դրամ, հաշմանդամության կարգ ունեցող աշխատակիցներին տրվող հավելավճար՝ 12 մլն դրամ, խրախուսումներ և ֆինանսական

աջակցություն՝ 20 մլն դրամ, տարեվերջյան պարզևատրում (13-րդ աշխատավարձ) հիմնական աշխատակիցներին՝ 280 մլն դրամ:

Ընթացիկ ծախսերը մնացած բոլոր հոդվածներով միասին կրճատվել են 72 մլն դրամով: Դրանցում պահպանվել են ուսանողական միջոցառումների, գործուղումների և միջազգային օլիմպիադաներին մասնակցելու համար նախատեսված ծախսերը, ինչպես նաև Ապրիլյան պատերազմի ընթացքում զոհված զինծառայողների երեխաներին ֆինանսական աջակցությունը, իսկ աշխատողների առողջության ապահովագրության ծրագրի ծախսերն ավելացել են 15 մլն դրամով, քանի որ նախատեսվում է ընդլայնել մատուցվելիք ապահովագրական ծառայությունների ցանկը:

Ոչ ընթացիկ ծախսերը կրճատվել են 228 մլն դրամով, որից 128 մլն դրամը վերաբերում է գույքի ձեռքբերման, իսկ 100 մլն դրամը՝ հիմնանորոգման ծախսերին: Վերջինիս համար նախատեսված 400 մլն դրամից 150 մլն ուղղվելու է ուսանողական հանրակացարանի նորոգմանը, որի ավարտից հետո ձեռք է բերվելու կահույք:

Ռիսկերը կառավարելու համար նախատեսվել է 35 մլն դրամ պահուստային ֆոնդ:

Կառուցվածքային ստորաբաժանումների համար նախատեսված ծախսերը 2017 թ. համեմատ կրճատվել են 30 մլն դրամով:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց նախահաշվի վերաբերյալ հարցեր ուղղել ռեկտորին: Խորհրդի անդամ, Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող Բ. Հովհաննիսյանը հետաքրքրվեց՝ արդյոք ծախսերի կրճատումը բացասաբար չի անդրադարձնա ԵՊՀ 100-ամյակին նվիրված հոբեյանական միջոցառումների կազմակերպման վրա: Ռեկտորը վստահեցրեց, որ խնայված միջոցները և ծախսերի պլանավորումը հնարավորություն կտան ըստ արժանվույն անցկացնելու կարևոր հոբեյանը:

Նախագահ Ս. Սարգսյանն էլ նշեց, որ դպրոցն ավարտող երեխաների նվազող թիվը պետք է ստիպի ԵՊՀ ռեկտորատին լրացուցիչ աշխատանքներ տանել պոտենցիալ դիմորդների մեկ այլ խմբի՝ մոտ ժամանակներս զորացրվողների հետ, քանի որ զինծառայողներից շատերը չգիտեն կամ չեն պատկերացնում բուհում իրենց կրթությունը շարունակելու ընթացակարգը և հեռանկարները: Ռեկտորի հավաստմամբ՝ արդեն ծրագրված են այդ նպատակով այցեր Արարատի և Վայքի զորամասեր:

Այլ հարցեր և առաջարկներ չհնչեցին, ուստի նախահաշիվը դրվեց քվեարկության. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### **Որոշվեց.**

Դեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 7-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 7-րդ ենթակետով, լսելով ռեկտոր Ա. Սիմոնյանի զեկուցումը Երևանի պետա-

կան համալսարանի 2018 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2018 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ռեկտորին 2018 թվականի ծախսերը կատարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2018 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվին համապատասխան:

**4. 2018 թ. ԵՊՀ կառուցվածքի հաստատում:** Օրակարգի 4-րդ հարցը ներկայացնելիս ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը հիշեցրեց, որ ԵՊՀ-ում գործում են 19 ֆակուլտետներ, համահամալսարանական և ֆակուլտետային ենթակայության 2-ական ինստիտուտներ, 1 մասնաճյուղ և կառուցվածքային այլ ստորաբաժանումներ: Գիտական խորհուրդը ԵՊՀ կառուցվածքում նոր ստորաբաժանումների ստեղծման, գործող մի քանի ստորաբաժանումների լուծարման և վերակազմակերպման միջնորդություններ է քննարկել:

Առաջարկվում է Կենսաբանության ֆակուլտետի «Սնկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիաների լաբորատորիա» կառուցվածքային ստորաբաժանումը տեղափոխել Ֆարմացիայի ինստիտուտի կառուցվածքի մեջ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում «Միեր Ջուլիաձյանի անվան օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման կաբինետ» ստորաբաժանումը վերակազմակերպել «Օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզման և մոդելավորման՝ Միեր Ջուլիաձյանի անվան ուսումնական լաբորատորիա» կառուցվածքային ստորաբաժանման, իսկ Սերվիսի ամբիոնի ուսումնական լաբորատորիան անվանակոչել «Սերվիսի ամբիոնի՝ Լեմվել Վալեսյանի անվան ուսումնական լաբորատորիա»: Առաջարկվում է նաև Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն» և «Սոցիալական հոգեբանության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները վերանվանել համապատասխանաբար «Տեսական փիլիսոփայության, տրամաբանության և հռետորիկայի ամբիոն» և «Սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոն», իսկ Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի «Անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոն» և «Անգլերեն լեզվի թիվ 2 ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումներն էլ՝ համապատասխանաբար «Անգլերենի թիվ 1 ամբիոն» և «Անգլերենի թիվ 2 ամբիոն»:

Իջևանի մասնաճյուղում «Վարչատնտեսական վարչություն», «Պահպանության ծառայություն», «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «Արխիվ», «Բուժկետ», «Քաղաքացիական պաշտպանության շտաբ» կառուցվածքային ստորաբաժանումները լուծարվում են, «Անձնակազմի կառավարման բաժին» ստորաբաժանումը վերակազմա-

կերպվում է «Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին» կառուցվածքային ստորաբաժանման, ստեղծվում է «Գիտակազմակերպական բաժին» կառուցվածքային ստորաբաժանում, իսկ «Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկաների կազմակերպման բաժին» ստորաբաժանումը վերանվանվում է «Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժին»:

Կառուցվածքային մյուս փոփոխություններից Ա. Սիմոնյանը մատնանշեց «Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոն» և «Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն» համահամալսարանական կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծումը: Վերջինիս մեջ ներառվում է նախկինում Հայ բանասիրության ֆակուլտետի կառուցվածքում ընդգրկված Մանկավարժության ամբիոնը:

Հարցեր չհնչեցին, և Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց քվերակությամբ հաստատել ԵՊՀ կառուցվածքը. կողմ` 31, դեմ` 0, ձեռնպահ` 0:

### **Որոշվեց.**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով` հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2018 թվականի կառուցվածքը` համաձայն հավելվածի:

**5. 2018 թ. ԵՊՀ հաստիքացուցակի հաստատում:** Խոսելով հաստիքացուցակի մասին` Ա. Սիմոնյանը զեկուցեց, որ բոլոր ստորաբաժանումների հաստիքների ընդհանուր թիվը 2610 դրույք է, որից պրոֆեսորադասախոսական կազմինը` 1022.75, գիտական անձնակազմինը` 470, վարչակազմինը` 197.5, ուսումնաօժանդակ անձնակազմինը` 317.75, սպասարկող անձնակազմինը` 162, Իջևանի մասնաճյուղինը` 207.5 դրույք: Տրվելու են նաև հավելվածարներ, ժամավճարային հիմունքով դասախոսական աշխատանքի վարձատրություն, տարեկան մեկ անգամ` դեկտեմբերին, աշխատավարձի դրույքի չափով պարգևատրում հիմնական աշխատակիցներին և այլն, որոնց ընդհանուր ծավալն արդեն ներկայացվել է 2018 թ. բյուջեի նախահաշիվը զեկուցելիս:

Հաստիքային միավորները նախատեսված է նվազեցնել գրեթե բոլոր հաստիքային խմբերում, հատկապես` պրոֆեսորադասախոսական, վարչաօժանդակ, ուսումնաօժանդակ, սպասարկող և ինժեներատեխնիկական անձնակազմերում:

Հաստիքացուցակով նախատեսված ընդհանուր ծախսերը 6 մլրդ 332 մլն դրամ են:

Քանի որ հարցեր չհնչեցին, Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց հաստատել ԵՊՀ հաստիքացուցակը. կողմ` 31, դեմ` 0, ձեռնպահ` 0:

## Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 6-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 6-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

**6. Ընթացիկ հարցեր:** Ռեկտոր Ա. Սիմոնյանը տեղեկացրեց Խորհրդի անդամներին, որ գնումների մասին նոր օրենքի ընդունումից հետո ԵՊՀ-ն հարցում է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն, և պատասխան է ստացել, որ աուդիտ իրականացնող անձի ընտրության համար պետք է գնումների ընթացակարգով մրցույթ հայտարարվի, այնուհետև լավագույն առաջարկը պետք է հաստատվի Խորհրդի կողմից: Փաստորեն, մրցույթի արդյունքները պետք է ներկայացվեն Խորհրդի հաջորդ նիստի հաստատմանը:

Այնուհետև ելույթ ունեցավ նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրված ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս. Առաքելյանը: «Ազգ-բանակ» կոնցեպտը որդեգրելու համար նա շնորհակալություն հայտնեց պաշտպանության նախարար Վ. Սարգսյանին և նշեց, որ մասնաճյուղի 26 ուսանողներ մասնակցել են Ապրիլյան պատերազմին, ներկայիս 48 ուսանողներ իրականացրել են մարտական հերթափոխ և 81 ուսանողներ էլ զինծառայության մեջ են: Նա պատրաստակամություն հայտնեց՝ Տավուշի մարզի զորամասերին նվիրաբերելու անհրաժեշտ գրականություն, ինչպես նաև դասախոսություններ կազմակերպելու զինծառայողների համար: Ս. Առաքելյանը միաժամանակ խնդրեց, որ որևէ կերպ լուծում տրվի Նոյեմբերյանի և Բերդի տարածաշրջաններից եկող ուսանողների համար Իջևանում հանրակացարան կառուցելու խնդրին:

Խորհրդի անդամ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանող Դ. Ափոյանը ներկայացրեց հաշվետու ուստարում ԵՊՀ ՌԻՄ գործունեության առանցքային դրվագներն ու ցուցանիշները, ինչպես նաև հայտնեց ՌԻՄ նախագահության դրական վերաբերմունքը զինապարտության մասին նոր օրենքի նկատմամբ:

Խորհրդի անդամ, ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Գ. Հաջյանը ևս նշեց, որ ազգային բանակը ՀՀ անվտանգության կարևորագույն երաշխիքն է, ուստի պետք է նրա հզորացման ուղղությամբ շարունակական ջանքեր գործադրվեն, սակայն միաժամանակ նա մտահոգություն հայտնեց, որ բուհերի համար ստեղծվելու է նոր իրավիճակ, երբ անհրաժեշտ է լինելու զինծառայողների՝ մոռացած գիտելիքների վերականգնման լուրջ աշխատանքներ տանել, իսկ արդար զորահավաքի մասին հնչող դրույթները պետք է երաշխավորված լինեն:

Խորհրդի անդամ, ՀՀ պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը շնորհակալություն հայտնեց Մայր բուհի կոլեկտիվին՝ ՀՀ զինված ուժերին տարբեր ծրագրերով աջակ-

ցելու համար, և նշեց, որ բուհն ավարտողն իր գիտելիքներով բանակին ավելի շատ է պետք, ուստի անհրաժեշտ է, որ նա լինի սպա և բանակում իր օրինակով գիտելիքի ու կրթության նկատմամբ սեր սերմանի: Նա հավաստիացրեց, որ տաղանդավոր երիտասարդների հետ կոնկրետ աշխատանքներ են տարվելու, քանի որ պաշտպանությունը խոշորագույն պատվիրատու է գիտության համար: Միաժամանակ նա խնդրեց այս հարցում հստակ չափորոշիչներ մշակելու համար իրեն առաջարկնել ներկայացնել:

Ինթերնշիփի ներդրման անհրաժեշտության մասին ելույթ ունեցավ Խորհրդի անդամ, ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի գիտական ղեկավար Ս. Շուքուրյանը՝ մատնանշելով դրա համար եռահարկ նոր մասնաշենք ունենալու անհրաժեշտությունը: Ըստ նրա՝ աշխարհի առաջատար բուհերի օրինակով պետք է ունենալ մասնաշենք, որտեղ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի գործատուները գալիս և սենյակ են զբաղեցնում մի հարկում, իսկ մյուսներում լինում են ուսումնական և գիտահետազոտական հարկաբաժիններ: Ուսանողը չի կտրվում իր ուսումնական հաստատությունից և միաժամանակ տեղում ունենում է աշխատանքային փորձ ձեռք բերելու հնարավորություն: Ռեկտոր Ա. Սիմոնյանը հավաստիացրեց, որ առաջիկայում դա հնարավոր կլինի կազմակերպել ԵՊՀ մասնաշենքերից մեկում:

Այնուհետև Խորհրդի անդամ, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ Ռ. Հարությունյանը խնդրեց շարունակել լաբորատոր վերագինման քաղաքականությունը: Նախագահ Ս. Սարգսյանը հավաստիացրեց, որ ծրագիրը շարունակվելու է: Բացի այդ՝ Ռ. Հարությունյանն առաջարկեց ընդլայնել դիմորդների ներգրավման ուղղությամբ ակտիվորեն տարվող աշխատանքները, ինչպես նաև խնդրեց ազատականացնել լաբորատոր սարքավորումների գնման գործընթացը:

Խորհրդի անդամ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի վարիչ Ա. Մովսիսյանը ևս մեկ անգամ բարձրացրեց Ավանի համալսարանական բնակելի շենքերից քարաթափման դեպքերի խնդիրը: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը խոստացավ վերացնել խնդիրը:

Քանի որ այլ հարցեր և ելույթներ չհնչեցին, Նախագահ Ս. Սարգսյանն ամփոփեց Խորհրդի աշխատանքները, շնորհավորեց գալիք տոների կապակցությամբ և նիստը հայտարարեց փակված:

**Խորհրդի նախագահ՝**

**Ս. Սարգսյան**

**Քարտուղար՝**

**Մ. Մալխասյան**